ARMENIA EITI Extractive Industries Transparency Initiative

ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ
ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՈՒՄԲ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱՌՃԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱՈՃԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Առաջնորդվելով Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ՝ ԱՃԹՆ) սկզբունքներով՝ ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի կողմից նախատեսվել է աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետությունում պատասխանատու հանքարդյունաբերության (այսուհետ՝ ՊՀ) գործելաոճի ներդրմանը՝ որպես երկրի կայուն զարգացման կարևորագույն բաղադրիչներից մեկը, մշակել Հայաստանում ՊՀ գործելաոճի ներդրման ճանապարհային:

Հաշվի առնելով ԱՃԹՆ-ի 8-րդ պահանջը՝ վավերացման գործընթացում, ի հավելումն ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների կատարումը գնահատելուն, կարձանագրվեն նաև ԱՃԹՆ-ի ստանդարտի պարտադիր պահանջներից դուրս գործադրված ջանքերը: Դրանք բազմաշահառու խմբի կողմից իրականացվող նախաձեռնություններն են, որոնք նպատակաուղղված են աշխատանքային ծրագրի այն բոլոր նպատակների իրականացմանը, որոնք ընդգրկված չեն ԱՃԹՆ-ի ստանդարտի շրջանակներում, սակայն բազմաշահառու խմբի կողմից սահմանվել են որպես արդյունահանող ոլորտի համար ազգային առաջնահերթություններին արձագանքելու հարցում ԱՃԹՆ-ի անհրաժեշտ նպատակներ:

Ընդունելով ԱՃԹՆ-ի գործընթացի ներուժը նաև ՊՀ ներդրման ուղղությամբ աջակցություն ցուցաբերելու գործում՝ հայաստանյան ԱՃԹՆ-ի շրջանակներում պատվիրվել և մշակվել է ոլորտի օրենսդրական դաշտի ընդհանուր վերլուծություն:

Գիտակցելով, որ ՀՀ կառավարության կողմից մեկնարկել է հանքարդյունաբերության ոլորտի նոր ռազմավարության մշակման գործընթաց, որին պետք է նախորդեն ոլորտին առնչվող երկու խոշոր ուսումնասիրություններ, ինչպես նաև ելնելով ՊՀ-ն՝ որպես ոլորտում առաջնահերթություն սահմանելու ԱՃԹՆ ԲՇԽ-ի մոտեցումից, անհրաժեշտ է ռազմավարության մշակման գործընթացին առավելագույնս մասնակից դարձնել նաև ԲՇԽ-ի ՊՀ աշխատանքային խմբին:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խումբը հանձն է առնում՝

- մշակել «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտի վիճահարույց հարցերը և պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման միջազգային փորձը,

- տրամադրել կարծիքներ և առաջակություններ ՀՀ կառավարության կողմից Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվող «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» և «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով» ուսումնասիրությունների շրջանակներում:

- տրամադրել կարծիքներ և առաջարկություններ «Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության» մշակման աշխատանքների ընթացքում:

- հիմնարար փաստաթղթերի վերաբերյալ խմբի անդամների կողմից ներկայացված կարծիքները տրամադրել նաև ԲՇԽ-ին:

Ընդունելով, որ համընդհանուր ռազմավարության մշակումը և ոլորտի զարգացման հիմնական ուղղությունների ընդունումը կպահանջի 1-2 տարի, գտնում ենք, որ աշխատանքային խմբի ներուժը հնարավոր է օգտագործել նաև արդեն շրջանառվող կամ ընթացքում նոր իրավական ակտերի և նախագծերի կատարելագործման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱՌՃ ՆԵՐԴՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ[1]

ՀՈԴՎԱԾ	ՆՊԱՏԱԿ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ
1. «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթղթի մշակում	Հանքարդյունաբերության ոլորտին առնչվող հիմնախնդիրների վերլուծության և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա տալ պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը կամ շրջանակը, որտեղ կարտացոլվեն ՊՀ-ի ընդհանուր ուղղություններն ու առաջնահերթությունները:	1.1 Պատասխանատու հանքարդյունաբերության շրջանակի և ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի կողմից:	ՊՀ-ի աշխատանքային խումբ	հունվար 2019թ.
		1.2 Հավաքագրված առաջարկությունների վերաբերյալ քննարկման անցկացում աշխատանքային խմբի կողմից, փաստաթղթի կազմում և ներկայացում ԲՇԽ-ին:	ՊՀ-ի աշխատանքային խումբ	փետրվար 2019թ.

[1] 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածների ժամկետները պայմանավորված կլինեն Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ծրագրի (Դրամաշնորհ թիվ TF0A5519) շրջանակներում ՀՀ կառավարության համապատասխան միջոցառումների փաստացի իրականացման ժամկետներով:

		1.3 Հայեցակարգային փաստաթղթի հաստատում:	ԲՇԽ	փետրվար-մարտ 2019թ.
2. Հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծության աշխատանքներին մասնակցություն	Որպես երկրի տնտեսության մեջ էական տեղ զբաղեցնող ոլորտ, անհրաժեշտ է գնահատել հանքարդյունաբերության իրական տնտեսական ներուժը, գնահատել հանքերի տնտեսական կառավարման արդյունավետության աստիճանը, ինչպես նաև հանքի ներդրումը ազդակիր համայնքի զարգացման գործում:	2.1 Կարծիքների և առաջարկությունների տրամադրում «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության ամփոփ նկարագրի վերաբերյալ և հնարավորության դեպքում մասնակցություն դրանց շուրջ հանդիպում-քննարկմանը:	ՊՀ-ի աշխատանքային խումբ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն .	փետրվար-մարտ 2019թ.
		2.2 Կարծիքների և առաջարկությունների տրամադրում «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության նախնական տարբերակի վերաբերյալ և հնարավորության դեպքում մասնակցություն դրանց շուրջ հանդիպում-քննարկմանը:	ՊՀ-ի աշխատանքային խումբ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	ապրիլ-մայիս 2019թ.

		2.3 Կարծիքների և առաջարկությունների տրամադրում «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության վերջնական տարբերակի վերաբերյալ և հնարավորության դեպքում մասնակցություն դրանց շուրջ հանդիպում-քննարկմանը:	ՊՀ-ի աշխատանքային խումբ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	հունիս-հուլիս 2019թ.
3. **Մասնակցություն Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատման աշխատանքներին՝ ոլորտի քաղաքականության**	Անհրաժեշտ է գնահատել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման արդյունքում ազդակիր համայնքների և աշխատակիցների վրա բնապահպանական ու առողջապահական ազդեցությունները, ինչպես նաև ուսումնասիրելով ներկա իրավական և կանոնակարգային դաշտը և ինստիտուցիոնալ կարողությունները, պարզել	3.1 Կարծիքների և առաջարկությունների տրամադրում «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով» ուսումնասիրության ամփոփ նկարագրի վերաբերյալ և հնարավորության դեպքում մասնակցություն դրանց շուրջ հանդիպում-քննարկմանը:	ՊՀ-ի աշխատանքային խումբ, Բնապահպանության նախարարություն	մարտ-ապրիլ 2019թ.

մշակմանը նպաստելու նպատակով	առկա բացերը մի շարք բնագավառներում (ջրային ռեսուրսների , հողի, օդի որակի, հանքավայրի իրավահաջորդման, թափոնների կառավարում, առողջության վրա ազդեցության գնահատումը և այլն):			
		3.2 Կարծիքների և առաջարկությունների տրամադրում «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով» ուսումնասիրության նախնական տարբերակի վերաբերյալ և հնարավորության դեպքում մասնակցություն դրանց շուրջ հանդիպում-քննարկմանը:	ՊՀ-ի աշխատանքային խումբ, Բնապահպանության նախարարություն	մայիս-հունիս 2019թ.

		3.3 Կարծիքների և առաջարկությունների տրամադրում «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով» ուսումնասիրության վերջնական տարբերակի վերաբերյալ և հնարավորության դեպքում մասնակցություն դրանց շուրջ հանդիպում-քննարկմանը:	ՊՀ-ի աշխատանքային խումբ, Բնապահպանության նախարարություն	հուլիս-օգոստոս 2019թ.
4. Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակում	Աջակցություն հանքարդյունաբերության ոլորտի այնպիսի ռազմավարության մշակմանը, որը կնպաստի երկրի երկարաժամկետ կայուն զարգացմանը:	4,1 Մասնակցություն հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարություն մշակող ընկերության ընտրության համար տեխնիկական առաջադրանքի կազմման աշխատանքներին:	ՊՀ աշխատանքային խումբ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	հոկտեմբեր 2019թ.
		4.2 Կարծիքների և առաջարկությունների տրամադրում մշակվող փաստաթղթի ամփոփ նկարագրի (նախատեսված լինելու դեպքում) վերաբերյալ և մասնակցություն հանդիպում-քննարկմանը:	ՊՀ աշխատանքային խումբ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	2020թ.

		4.3 Կարծիքների և առաջարկությունների տրամադրում նախնական փաստաթղթի վերաբերյալ և մասնակցություն հանդիպում-քննարկմանը:	ՊՀ աշխատանքային խումբ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	2020թ.
5. **Շրջանառվող և նոր իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ պետական մարմինների հետ**	ՊՀ-ի հայեցակարգային փաստաթղթերի ընդհանուր տրամաբանությունից ելնելով՝ օրենսդրական առաջարկների ներկայացում:	5.1 Հանքարդյունաբերության ոլորտին առնչվող իրավական ակտերի և նախագծերի մոնիթորինգի իրականացում և առաջարկությունների ներկայացում աշխատանքային խմբի քննարկմանը՝ հետագայում առավել ամփոփ կարծիքներով և հիմնավորմամբ հանրագիր ներկայացնելու նպատակով:	ՊՀ աշխատանքային խումբ	ընթացիկ